ՀՈՎՀ.ՇԻՐԱԶԻ ԱՆՎԱՆ Հ.169 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

ԴԱՍԱՐԱՆ VII Գ

ԴԱՍՂԵԿ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

2022-2023ՈՒՍՏԱՐԻ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր բովանդակությունը

Հ/h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Հետևել սովորողների հաճախումներին, կարգապահությանը և առաջադիմությանը:	Ուստարվա ընթացքում
2.	Հնարավորինս կանխել ուշացումներն ու բացակայությունները:	Ուստարվա ընթացքում
3.	Ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնել ուշադրություն դարձնել թույլ կարողություններով սովորողներին:	Ուստարվա ընթացքում
4.	Ապահովել դասարանական կոլեկտիվի համերաշխ մթնոլորտը: Նպաստել միջանձնային հարաբերությունների զարգացմանը, ընկերասիրությանն ու հանդուրժողականությանը:	Ուստարվա ընթացքում
5.	Խոսել անձնական հիգիենայի պահպանման մասին:	Ուստարվա ընթացքում
6.	Դպրոցական գույքի նկատմամբ ցուցաբերել խնամք ու հոգատարություն:	Ուստարվա ընթացքում
7.	Հետաքրքրաշարժ միջոցառումների, մրցույթների ու ցուցահանդեսների անցկացում:	Ուստարվա ընթացքում
8.	Համագործակցել ծնողների հետ՝ ծնող-դպրոց կապի ապահովման նպատակով:	Ուստարվա ընթացքում
9.	Հիշարժան էքսկուրսիաների կազմակերպում:	Ուստարվա ընթացքում
10.	Հատուկ ուշադրություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին:	Ուստարվա ընթացքում

Հայեցի դաստիարակություն խնդիրներ

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Կարևորելով հայոց լեզվի, գրականության, հայոց եկեղեցու պատմության դերը՝ սովորողների մեջ արթնացնել սեր հայրենիքի նկատմամբ:	Ուստարվա ընթացքում
2.	Նպաստել, որ աշակերտները ծանոթանան սեփական երկրի պատմությանը, մշակույթին:	Ուստարվա ընթացքում
3.	Ծանոթացնել հոգևոր արժեքներին:	Ուստարվա ընթացքում
4.	Կարևորել մայրենի լեզվի իմացության բարձր մակարդակը:	Ուստարվա ընթացքում

Գեղագիտական դաստիարակության խնդիրները

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Հաճախակի կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ:	Ուստարվա ընթացքում
2.	Սովորեցնել տեսնել գեղեցիկը, վեհը:	Ուստարվա ընթացքում
3.	Կազմակերպել էքսկուրսիաներ՝ գեղագիտական ճաշակ զարգացնելու և ձևավորելու նպատակով:	Ուստարվա ընթացքում

Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն՝ պատմության ու գրականության դասերով, մերօրյա հերոսների օրինակով:	Ուստարվա ընթացքում
2.	Սովորեցնել, որ խաղաղ պայմաններում էլ պետք է կարողանալ պաշտպանել և սիրել հայրենիքը:	Ուստարվա ընթացքում
3.	Ծանոթացնել հայ ժողովրդի հերոս նախնիների պատմությանը:	Ուստարվա ընթացքում

Ֆիզիկական դաստիարակության խնդիրները

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Կարևորել ֆիզկուլտուրա առարկայի դերը: Հետևել նրանց մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին:	Ուստարվա ընթացքում
2.	Ներկայացնել առողջ ապրելակերպի	Ուստարվա ընթացքում

	կանոնները:	
3.	Կարևորել սպորտի դերն ու նշանակությունը մատաղ սերնդի ֆիզիկական զարգացման համար:	Ուստարվա ընթացքում
4.	Ներկայացնել հայ ազգի սպորտի վարպետներին:	Ուստարվա ընթացքում

Աշխատանքային դաստիարակության խնդիրները

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Սովորողներին սերմանել սեր աշխատանքի և հարգանք աշխատավոր մարդու նկատմամբ:	Ուստարվա ընթացքում
2.	Սովորողներին ներգրավել հասարակական աշխատանքներում:	Ուստարվա ընթացքում
3.	Սովորեցնել սիրով զբաղվել դասասենյակի կահավորման, գույքի վերանորոգման աշխատանքներին:	Ուստարվա ընթացքում

Բնապահպանական դաստիարակության խնդիրները

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Դպրոցական տարիքից սովորեցնել սիրել և պահպանել բնությունը:	Ուստարվա ընթացքում
2.	Սեփական ուժերով հարստացնել դասարանի և դպրոցի կանաչ անկյունները, խնամել բույսերը, մասնակցել ծառատունկներին:	Ուստարվա ընթացքում
3.	Սովորեցնել հետևել և պահպանել շրջակա միջավայրի մաքրությունը:	Ուստարվա ընթացքում

Դպրոց-ընտանիք կապը

Հ/h	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**
1.	Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ:	Ուստարվա ընթացքում
2.	Ծնողներին մասնակից դարձնել դպրոցական առօրյային, կազմակերպվող միջոցառումներին:	Ուստարվա ընթացքում
4.	Ծնողների հետ կազմակերպել նաև անհատական հանդիպումներ, քննարկել սովորողի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը վերաբերող հարցեր:	Ուստարվա ընթացքում

Կազմակերպչական աշխատանք

/Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն/**:**

Հ/հ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարող**
1.	Աշխատանքային պլանի կազմում:	Օգոստոս	Դասղեկ
2.	Աշակերտական կոլեկտիվի ծանոթացում:	Սեպտեմբեր	Դասղեկ
3.	Դասագրքերի բաշխում:	Օգոստոս	Դասղեկ,գրադարանավար
4.	Դասասենյակի կահավորում :	Օգոստոս	Դասղեկ,տնտեսվար,ծնողներ
5.	Սովորողների անձնական գործերի կարգավորում:	Սեպտեմբեր	Դասղեկ
6.	Սովորողներին ծանոթացնել դպրոցական կարգապահությանը:	Սեպտեմբեր	Դասղեկ
7.	Սովորողների հաճախումների ամենօրյա հաշվառում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
8.	Սովորողներին ներկայացնել աշակերտական ինքնավարության կանոնադրությունը:	Սեպտեմբեր	Դասղեկ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,ԴԱԿ
9.	Ձևավորել դասարանական աշակերտական խորհուրդ:	Սեպտեմբեր	Դասղեկ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,ԴԱԿ,սովորողներ
10.	Ձևավորել դասարանական ծնողական խորհուրդ:	Սեպտեմբեր	Դասղեկ,ծնողներ
11.	Դասագրքերի վիճակի ստուգում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,գրադարանավար
12.	Սովորողների վերաբերյալ պահանջվող տվյալների հավաքագրում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ
13.	Պարզել, թե դասարանի սովորողները ինչ արտադասարանական խմբակներ են հաճախում:	Սեպտեմբեր	Դասղեկ
14.	Սովորողների առաջադիմության մասին հաշվետվության կազմում:	Ուստարվա ավարտ	Դասղեկ
15.	Ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հաշվետվության կազմում:	Ուստարվա ավարտ	Դասղեկ

ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

/Դաստիարակչական աշխատանքների կազմակերպում և իրականացում դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մանկավարժական մյուս աշխատողների հետ/:

Հ/հ	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարող**
1.	Հավաքագրել սովորողների	Սեպտեմբեր	Դասղեկ

	մասին տեղեկություններ.պարզել նրանց ընտանեկան սոցիալական կարգավիճակը:		
2.	Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին հնարավորության սահմաններում տրամադրել աջակցություն:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ծնողներ
3.	Դասարանի սովորողներին ընդգրկել համադպրոցական միջոցառումներում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ, ԴԱԿ
4.	Ձևավորել դասարանական աշակերտական խորհուրդը:	Սեպտեմբեր	Դասղեկ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,ԴԱԿ,սովորողներ
5.	Մասնակցել դպրոցի աշակերտական խորհրդի նախագահի ընտրությանը:	Սեպտեմբեր	Դասղեկ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ,ԴԱԿ,սովորողներ
6.	Ուսման մեջ ետ մնացող սովորողներին ցուցաբերել աջակցություն:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ուսուցիչներ,սովորողներ
7.	Բացահայտել շնորհալի սովորողներին և ըստ իրենց կարողությունների ընդգրկել համադպրոցական միջոցառումներում:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,ԴԱԿ,ուսուցիչներ
8.	Պարզել դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարիքներն ու ցուցաբերել համապատասխան աջակցություն:	Ուստարվա ընթացքում	Դասղեկ,բազմամասնագիտական թիմ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Ժամկետ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող	Նշումներ
Սեպտեմբեր	Կատարել դասագրքերի բաշխում։ Զրույց՝ նվիրված Գիտելիքի օրվան։ Հանգստից անցնել ուսման՝ ժամանակին և ճիշտ կատարել բոլոր դասապատրաստումները։ Անհարգելի չբացակայել, չուշանալ դասերից, ներկայանալ աշակերտին վայել համազգեստով։ Կազմել դասարանական հերթապահության գրաֆիկը։ Զրուցել ՀՀ Անկախության մասին։ Ծանոթանալ նոր առարկաների հետ։ Կատարել դասալսումներ ռուսաց	Դասղեկ Սովորողներ	

	լեզվից և անգլերենից։ Զրուցել անձնական հիգիենայի մասին։		
Հոկտեմբեր	Կազմակերպչական հարցերի քննարկումներ։ Անհատական զրույցներ անցկացնել դժվար դաստիարակվող աշակերտների հետ։ Խոսել ընկերասիրության և հանդուրժողականության մասին։ Շնորհավոր տոնդ, ուսուցիչ։ Զրուցել ուսուցչի դերի մասին։ Զրույց՝ «Ես Հայաստան աշխարհի զավակն եմ» թեմայով։ Հետևել դասասենյակի ծաղիկների խնամքին և մաքրությանը։ Կատարել դասալսումներ և քննարկել։ Օգնել ուսման մեջ հետ մնացող աշակերտներին։ Զրուցել դասարանական գույքի պահպանման մասին։	Դասղեկ Սովորողներ	
Նոյեմբեր	Հետևել սովորողների կարգապահությանն ու հաճախումներին։ Խոսել հիգիենայի կանոնների մասին։ Քննարկում «Ով է պատասխանատու իմ արարքների համար» թեմայի շուրջ։ Զրույց՝ «Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր» թեմայով։ Դասագրքերի և տետրերի ստուգում։ Առաջադիմության խնդիրների պարզաբանում։ Կատարել դասալսումներ, քննարկել։	Դասղեկ Սովորողներ	
Դեկտեմբեր	Հետևել սովորողների կարգապահությանն ու հաճախումներին։ Զրույց բնական աղետների մասին. թող աղետները լինեն միայն երազում։	Դասղեկ Սովորողներ	

	Զրուցել «Ինչպես կուզեի ապրել» թեմայով։ Դասարանում ստեղծել տոնական տրամադրություն։ Ամփոփել առաջին կիսամյակի արդյունքները։		
Հունվար	Զրույց «Ինչպես անցկացրեցի ձմեռային արձակուրդները» թեմայի շուրջ։ Երկրորդ կիսամյակի անելիքների քննարկում։ Կարգապահական հարցերի վեր հանում։ « Հպարտ ենք քեզնով, հայ զինվոր» միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի օրվան։ Հրավիրել ծնողական ժողով և ամփոփել առաջին կիսամյակի արդյունքները։	Դասղեկ Սովորողներ	
Փետրվար	Հետևել աշակերտների հաճախումներին, կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները։ Կարգավորել դասարանի աշակերտների փաստաթղթերը։ Կարգապահական հարցերի քննարկում։ «Ուզում եմ ունենալ պետություն, որտեղ…» թեմայի քննարկում։ Կատարել դասալսումներ և կազմակերպել քննարկումներ։ Գրքի տոնի առիթով մասնակցել դպրոցի գրադարանի հարստացման աշխատանքներին։	Դասղեկ Սովորողներ	
Մարտ	Հետևել աշակերտների հաճախումներին, կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները։ Կազմակերպել անհատական զրույցներ թույլ առաջադիմող սովորողների և նրանց ծնողների հետ։ Քննարկել նրանց աջակցելու ուղղությամբ աշխատանքներ կազմակերպելու հարցեր։	Դասղեկ Սովորողներ	

	Փոքրիկ միջոցառում նվիրված կանանց տոնին՝«Շնորհավոր տոնդ, մայր, ուսուցիչ, տատիկ, քույր»։ Զրույց «Ինչպես կուզեի ապրել» թեմայի շուրջ։		
Ապրիլ	Հետևել աշակերտների հաճախումներին, կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները։ Ստուգել դասագրքերը և իրականացնել վերանորոգման աշխատանքներ։ Հետևել դասարանի մաքրությանն ու դասարանական գույքի պահպանմանը։ Ծնողներին ներգրավել ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործընթացին։ Զրույց «Բարոյականություն և իրավունք» թեմայի շուրջ։ Կազմակերպել դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներ։ Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր։	Դասղեկ Սովորողներ	
Մայիս	Հետևել աշակերտների հաճախումներին, կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները։ Կատարել աշակերտների բացակայած ժամերի նախնական ամփոփում։ Սովորողների մոտ սերմանել աշխատասիրություն։ Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիա դեպի որևէ մշակութային օջախ։ Զրուցել միասնականության ու ամուր կամքի մասին։ «Ես մի ճյուղն եմ իմ երկրի» թեմայի քննարկում։ Նախապատրաստվել երկրորդ կիսամյակի ամփոփմանը։ Ավարտեցինք 2022-2023 ուստարին։	Դասղեկ Սովորողներ	